



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0912/02/14
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
Դատավորներ՝ Հ.Գրիգորյան
Կ.Սաղյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0912/02/14

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

21-ին հուլիսի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)
վճռաբեկության կարգով՝
նախագահությամբ՝ դատավոր Ա.Հայրապետյանի
դատավորներ՝ Վ.Հովսեփյանի
Գ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության ընդդեմ Արթուր Սեյրանի Փարամազյանի և Արթուր Օսիպյանի՝ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015 թվականի մայիսի 27-ի որոշման դեմ պատասխանող Ա.Փարամազյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությունը /այսուհետ՝ նաև Բյուրո/ հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ ընդդեմ Արթուր Փարամազյանի և Արթուր Օսիպյանի՝ 1.077.000 /մեկ միլիոն յոթանասունյոթ հազար/ ՀՀ դրամ բռնագանձելու պահանջով:

Առաջին ատյանի դատարանի 2014թ. նոյեմբերի 21-ի վճռով հայցը մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ Բյուրոյի գործադիր տնօրենի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով գործը, 2015թ. մայիսի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է և Առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանել ու փոփոխել է: Հայցը բավարարվել է՝ Արթուր Փարամազյանից և Արթուր Օսիպյանից համապարտության կարգով հոգուտ Բյուրոյի բռնագանձելով 1.077.000 ՀՀ դրամ:

Նշված որոշման դեմ համապատասխանող Արթուր Փարամազյանը 2015թ. հունիսի 22-ին բերել է վճռաբեկ բողոք, որը Գերագույն դատարանի 2015թ. հուլիսի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացվել Բյուրոյի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Նազարյանի կողմից:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջները և չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 2-րդ կետը /պետք է նշվեր՝ մասը/, որի արդյունքում կայացվել է անօրինական և չհիմնավորված որոշում՝ բողոքաբերի համար առաջացնելով ծանր հետևանքներ:

Նշված պնդումը բողոք բերող անձը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

1. Իր կողմից վարած ավտոմեքենան պատկանել է իր հորեղբոր տղա Նվեր Փարամազյանին, որին էլ փոխանցվել է պատահարի հետևանքով առաջացած վնասի գումարը, իսկ վերջինս Բյուրոյին պարտավորագիր է տվել՝ վնասը հատուցելու մասին:

2. Առաջին ատյանի դատարանը Նվեր Փարամազյանին գործով կողմ չի ներգրավել, վերջինիս կողմից Բյուրոյին տրված պարտավորագիրը չի պահանջել, իսկ Վերաքննիչ դատարանը, այդ հանգամանքները, գործի լուծման տեսանկյունից, համարել է էական նշանակություն չունեցող, գործի նյութերից և օրենսդրության պահանջներից չբխող:

Բողոքաբերը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը հիմնավորել է նրանով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Նա նաև նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տված առերևույթ դատական սխալն իր համար առաջացրել է ծանր հետևանքներ:

Վերոնշյալի հիման վրա բողոք բերող անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2015թ. մայիսի 27-ին որոշումը և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի պատասխանը.

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշվում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումն օրինական է, հիմնավորված և պատճառաբանված, հիմնված է գործում առկա ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտության վրա, ուստի վճռաբեկ բողոքի փաստարկները որևէ իրավական նշանակություն չունեն սույն վեճի լուծման համար:

Վճռաբեկ բողոքի պատասխանում խնդրվում է վճռաբեկ բողոքը չընդունել քննության կամ մերժել:

4.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ԼՂՀ ԿԱ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետի կողմից 2013թ. մարտի 18-ին հաստատված եզրակացության համաձայն՝ 2013թ. մարտի 17-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում Ստեփանակերտ քաղաքի Նաբերեժնայա-Բաղրամյան փողոցների խաչմերուկում «ՎԱԶ-2106» մակնիշի 05LS092 համարանիշի ավտոմեքենան /այսուհետ՝ նաև վնաս պատճառած ավտոմեքենա/, որի վարորդն էր Արթուր Սեյրանի Փարամազյանը, խախտելով «Զիջել ճանապարհը» և «Կանգ գծի» գծանշման պահանջը, դուրս է եկել խաչմերուկ և բախվել «ՎԱԶ-21214» մակնիշի 22LL220 համարանիշի ավտոմեքենային /այսուհետ՝ նաև տուժած ավտոմեքենա/, որի վարորդն էր Էդուարդ Ռուսլանի Իսրայելյանը: Ըստ եզրակացության եզրափակիչ մասի՝ Արթուր Փարամազյանը ՃԵԱԱՄ օրենքի 26-րդ հոդվածի, ՃԵԿ-ի 2.4 նշանի և 1.12 գծանշման պահանջները խախտելու և ՃՏՊ կատարելու համար ենթակա է վարչական պատասխանատվության ԼՂՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի /այսուհետ՝ ՎԻՎ օրենսգիրք/ 124.6 հոդվածի 2-րդ մասով: Տուժած ավտոմեքենայի վարորդը ՃԵԿ-ի խախտում թույլ չի տվել և ենթակա չէ վարչական պատասխանատվության:

2. Տրանսպորտային միջոցի գրանցման 23.12.2006թ. թիվ SA վկայագրի համաձայն՝ «ՎԱԶ-2106» մակնիշի 05LS092 հաշվառման համարանիշի ավտոմեքենան գրանցված է Արթուր Օսիպյանի անվամբ:

3. Տրանսպորտային միջոցի հաշվառման 26.11.2012թ. թիվ SQ 718930 վկայագրի և 26.11.2012թ. սեփականության իրավունքի № 01AA717405 վկայականի համաձայն՝ «ՎԱԶ-21214» մակնիշի 22LL220 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է Էդուարդ Ռուսլանի Իսրայելյանին:

4. Տուժած ավտոմեքենայի վարորդ Էդուարդ Ռուսլանի Իսրայելյանը 20.03.2013թ. Բյուրոյին է ներկայացրել հատուցում ստանալու պահանջի վերաբերյալ թիվ 510 դիմումը:

5. Բյուրոյի 10.04.2014թ. Բ/SU-437 տեղեկանքի համաձայն՝ «ԱՐ ՎԻ ԷՍ Քոնսալտ» ՍՊ ընկերությունը 2011թ. հունվարի 25-ին ստացել է ԱՊՊԱ ոլորտում անշարժ գույքին և անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնասներ գնահատող փորձագետի որակավորում՝ մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը ժամկետով:

6. Բյուրոյի 26.04.2014թ. Բ/SU-548 տեղեկանքի համաձայն՝ 26.03.2013թ. դրությամբ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի տվյալներով՝ 17.03.2013թ. վնաս պատճառած ավտոմեքենայի վերաբերյալ կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր առկա չի եղել:

7. 21.03.2013թ. Բ/SU-252 փորձաքննություն կատարելու պատվերի համաձայն՝ Բյուրոն դիմել է «ԱՐ ՎԻ ԷՍ Քոնսալտ» ՍՊ ընկերությանը՝ մինչև 04.04.2013թ.-ը կատարելու տուժած ավտոմեքենային հասցված վնասի չափի փորձաքննություն:

8. Տուժած ավտոմեքենային պատճառված վնասի գնահատման մասին «ԱՐ ՎԻ ԷՍ Քոնսալտ» ՍՊ ընկերության թիվ Հ034 հաշվետվության համաձայն՝ տուժած

ավտոմեքենային վթարի հետևանքով պատճառված վնասը՝ 2013թ. ապրիլի 4-ի դրությամբ գործող շուկայական գներով, կազմել է 1.052.000 ՀՀ դրամ:

9. 03.04.2013թ. թիվ 226 հաշիվ-ֆակտուրայի համաձայն՝ «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊ ընկերության կողմից կատարված փորձաքննության արժեքը կազմում է 25.000 ՀՀ դրամ, իսկ 05.04.2013թ. թիվ 130548 վճարման հանձնարարականի համաձայն՝ Բյուրոն «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊ ընկերությանը՝ որպես փորձաքննության դիմաց վճար, փոխանցել է 25.000 ՀՀ դրամ:

10. 25.04.2013թ. թիվ 13/116Ա հրամանի համաձայն՝ Բյուրոյի գործադիր տնօրենը հրամայել է Բյուրոյի երաշխավորման ֆոնդի միջոցներից Էդուարդ Իսրայելյանին վճարել 1.052.000 ՀՀ դրամ հատուցում:

11. 23.04.2013թ. Բյուրո մուտքագրված դիմումի համաձայն՝ Էդուարդ Իսրայելյանը խնդրել է իրեն հասանելիք հատուցման գումարը փոխանցել «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերությունում բացված համապատասխան հաշվեհամարին:

12. 25.04.2013թ. թիվ 130697 վճարման հանձնարարականի համաձայն՝ Բյուրոն Էդուարդ Իսրայելյանի՝ «Կոնվերս բանկ» ՓԲ ընկերությունում բացված համապատասխան հաշվեհամարին՝ որպես հատուցում, փոխանցել է 1.052.000 ՀՀ դրամ:

13. Գործում բացակայում են ապացույցներ՝ Բյուրոյի կողմից «ԱՐ ՎԻ ԷՄ Քոնսալտ» ՍՊ ընկերությանը՝ որպես փորձաքննության կատարման ծախս վճարված 25.000 ՀՀ դրամը, ինչպես նաև Բյուրոյի կողմից տուժած ավտոմեքենայի սեփականատեր Էդուարդ Իսրայելյանին՝ որպես ապահովագրական հատուցում վճարված 1.052.000 ՀՀ դրամը՝ վնաս պատճառված ավտոմեքենայի սեփականատեր Արթուր Օսիպյանի և /կամ/ վարորդ Արթուր Փարամազյանի կամ ոմն Նվեր Փարամազյանի կողմից Բյուրոյին վճարված լինելու մասին:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ ելնելով հետևյալից.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը /իրական վնաս/, ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր /բաց թողնված օգուտ/:

Վերոհիշյալ իրավական նորմերից հետևում է, որ վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունը պայմանավորված լինելով վնասի առաջացման և վնաս պատճառած անձի գործողությունների պատճառահետևանքային կապով, հնարավորություն է տալիս շահագրգիռ անձին պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, որոնք նա կարող էր ստանալ

քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր:

Վնասի հատուցման առումով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասը հասակ սահմանում է, որ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման, այն պատճառած անձի կողմից:

Վնասի հատուցման դեպքերում պատասխանատվության վրա հասնելու համար նյութական իրավունքը սահմանել է իրար փոխկապակցված վերապահումներ, այսինքն՝ վնասը պետք է հատուցվի հետևյալ պարտադիր, անհրաժեշտ և միաժամանակյա հատկանիշների /պայմանների/ առկայության դեպքում.

-վնասի առկայությունը,

-գործողության /անգործության/ հակաիրավական լինելը,

-վնաս պատճառողի մեղքը,

-վնաս պատճառողի գործողությունների և վրա հասած վնասի պատճառահետևանքային կապը:

Սույն քաղաքացիական գործի փաստերի համաձայն՝ 2013թ. մարտի 17-ին ժամը 14:00-ի սահմաններում միմյանց են բխվել Արթուր Փարամազյանի վարած «ՎԱԶ-2106» մակնիշի 05LS092 համարանիշի և Էդուարդ Իսրայելյանի «ՎԱԶ-21214» մակնիշի 22LL220 համարանիշի ավտոմեքենաները:

ԼՂՀ ԿԱ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետի կողմից 2013թ. մարտի 18-ին հաստատված եզրակացության համաձայն՝ ՃԵԿ-ի կանոնների խախտումը թույլ է տրվել Արթուր Փարամազյանի կողմից, այսինքն՝ հաստատվել է վերջինիս գործողությունների հակաիրավական լինելը, նրա մեղքի հետևանքով առաջացած վնասի առկայությունը:

Նշված եզրակացությունը Ա.Փարամազյանի կողմից չի վիճարկվել:

Տրանսպորտային միջոցի գրանցման 23.12.2006թ. թիվ SA 027046 վկայագրից հետևում է, որ Արթուր Փարամազյանի վարած և «ՎԱԶ-2106» մակնիշի 05LS092 հաշվառման համարանիշի ավտոմեքենան գրանցված է Արթուր Օսիպյանի անվամբ, իսկ տրանսպորտային միջոցի հաշվառման 26.11.2012թ. թիվ SQ 718930 վկայագրի և 26.11.2012թ. սեփականության իրավունքի № 01 AA 717405 վկայականի համաձայն՝ «ՎԱԶ-21214» մակնիշի 22LL220 համարանիշի տրանսպորտային միջոցը սեփականության իրավունքով պատկանում է Էդուարդ Ռուսլանի Իսրայելյանին:

Գործի նյութերից հետևում է, որ ո՛չ Արթուր Օսիպյանը և ո՛չ էլ Արթուր Փարամազյանը պատահարի պահին չեն ունեցել «ՎԱԶ-2106» մակնիշի 05LS092 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրելու վերաբերյալ՝ ԱՊՊԱ օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագիր:

Վերը նշվածից հետևում է, որ Արթուր Փարամազյանը, խախտելով «ՎԱԶ-2106» մակնիշի 05LS092 համարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր ունենալու մասին ԱՊՊԱ օրենքից բխող պահանջը, 2013թ. մարտի

17-ին, Ստեփանակերտ քաղաքի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհի հանդիսացող Նաբերեժնայա-Բաղրամյան փողոցների խաչմերուկում Արթուր Օսիպյանի անվամբ գրանցված՝ վերը նշված ավտոմեքենան վարելիս /օգտագործելիս/ խախտել է ՃԵԿ-ի պահանջները և վնաս հասցրել Էդուարդ Իսրայելյանին սեփականության իրավունքով պատկանող «ՎԱԶ -21214» մակնիշի 22ԼԼ220 համարանիշի ավտոմեքենային:

Գերագույն դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ է եզրահանգել, որ ԱՊՊԱ օրենքի համաձայն՝ տեղի ունեցած ապահովագրական պատահարում Արթուր Փարամազյանը հանդիսանում է որպես վնաս պատճառած անձ կամ վնաս պատճառող, իսկ Էդուարդ Իսրայելյանը՝ որպես տուժող կամ տուժած անձ:

ԱՊՊԱ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրական հատուցում ստանալու համար տուժողն իրավունք ունի ապահովագրական պատահարի օրվանից հետո՝ եռամսյա ժամկետում դիմելու վնաս պատճառած անձի պատասխանատվությունն ապահովագրած ապահովագրական ընկերությանը կամ նույն օրենքով նախատեսված դեպքերում՝ Բյուրոյին: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Ապահովագրական հատուցում ստանալու համար տուժողը կամ նրա իրավահաջորդն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայացնում են դիմում և Բյուրոյի կանոններով նախատեսված փաստաթղթերը: Ապահովագրական հատուցում ստանալու մասին դիմումը պետք է լինի հիմնավորված և պատճառաբանված»:

Բյուրոն, հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ԼՂՀ օրենքի /այսուհետ՝ նաև ԱՊՊԱ օրենք/ 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 5-րդ հոդվածի 4-րդ մասի, 10-րդ հոդվածի, 20-22-րդ հոդվածների 1-ին մասերի, 49-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, հատուցել է Է.Իսրայելյանին պատճառված վնասը և հետադարձ պահանջի իրավունքով դիմել Առաջին աստիճանի դատարան՝ Արթուր Փարամազյանից ու Արթուր Օսիպյանից համապարտության կարգով հօգուտ Բյուրոյի 1.077.000 /մեկ միլիոն յոթանասունյոթ հազար/ ՀՀ դրամ բռնագանձելու պահանջով:

Առաջին աստիճանի դատարանը հայցի մերժման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, թե իբր Բյուրոն չի պարզել՝ ո՞վ է եղել պատասխանող Ա.Փարամազյանի վարած ավտոմեքենայի լիազորված տիրապետողը, հայցադիմումին կից չի ներկայացրել Նվեր Փարամազյանի կողմից Բյուրոյին տված գրավոր պարտավորագիրը՝ ավտոմեքենային պատճառված վնասն անձամբ հատուցելու մասին, և որ Բյուրոն Նվեր Փարամազյանին կողմ չի ներգրավել:

Այդ առումով Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գործող օրենդրության վերլուծության և գործի փաստական հանգամանքների համակցության գնահատման արդյունքում բավարարելով վերաքննիչ բողոքը և հայցը, հիմնավոր կերպով իր որոշման մեջ նշել է, որ Առաջին աստիճանի դատարանի կողմից մատնանշված պատճառաբանությունները չեն կարող

հայցի մերժման հիմքում դրվել, քանի որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն, չեն բխում գործի նյութերից և օրենսդրության պահանջներից:

Գերագույն դատարանը հարկ է համարում նշել, որ գործում չկան սվյալներ, որոնք կվկայեն, որ ոմն Նվեր Փարամազյան քաղաքացին տրանսպորտային պատահարի հետ որևէ առնչություն ունի կամ նա Բյուրոյի իրավունքները խախտող որևէ գործողություն է կատարել: Վճռաբեկ բողոքի պատասխանով ևս հիմնավորում է, որ ոմն Նվեր Փարամազյանը որևէ առնչություն չունի սույն գործի հետ:

Չեռևաբար, անհիմն են վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները՝ Նվեր Փարամազյանին գործով կողմ չներգրավելու մասին, որովհետև սույն գործով դատական քննության ենթակա վեճի առարկա իրավահարաբերության իրական պատասխանողները՝ Արթուր Փարամազյանը և Արթուր Օսիպյանն են, որն էլ հիմնավորված է Վերաքննիչ դատարանի որոշման մեջ:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վճռաբեկ բողոքում նշված՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի և նույն օրենսգրքերից բխող նորմերի խախտումներ և սխալ եզրահանգումներ թույլ չեն տրվել, Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական, հիմնավորված և պատճառաբանված է, ուստի այն պետք է թողնել օրինական ուժի մեջ:

Քննարկելով վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի բաշխման հարցը և հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով այն պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Արթուր Սեյրանի Փարամազյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. մայիսի 27-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ _____ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ _____ Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

_____ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ